



Ինգա Ջարաֆյան՝ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ

ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՌԻՍԿԵՐ,
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«Միջուկային էներգետիկան կրում է բազմաթիվ անորոշություններ»

Գերդ Ռոզենկրանց,

«Միջուկային էներգետիկա, Միֆեր և իրականություն»

Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2006

Ներածություն

Հայաստանի ատոմային էներգետիկայի հիմնական օբյեկտը Հայկական ատոմային էլեկտրակայանն է (ՀԱԷԿ) և նրա հետ կապված անվտանգության, շահագործման և աշխատած միջուկային վառելիքի, ռադիոակտիվ թափոնների թաղման, հարակից ենթակառուցվածքների անվտանգության, ինչպես նաև անվտանգության միջոցառումների ապահովման պատասխանատվության գործընթացները:

Ընդհանուր տեղեկություններ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (ՀԱԷԿ) տեղակայված է Արարատյան հարթավայրում, Հայաստանի մայրաքաղաք Երևանից 28 կմ դեպի արևմուտք: ՀԱԷԿ-ն ունի երկու էներգաբլոկ՝ կառուցված BBՅՔ-440 տիպի B-270 մոդելի ռեակտորների բազայի վրա: ՀԱԷԿ-ի առաջին էներգաբլոկը շահագործման և հանձնվել 1976 թ-ի դեկտեմբերի 22-ին, իսկ երկրորդը՝ 1980 թ-ի հունվարի 5-ին: Յուրաքանչյուր էներգաբլոկի հզորությունը 407.5 ՄՎտ էր:

ՀԱԷԿ-ից 83 կմ հեռավորության վրա գտնվող Սպիտակի՝ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժից հետո ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը որոշում ընդունեց կանգնեցնել ՀԱԷԿ-ը: 1989 թ-ի փետրվարի 25-ին կանգնեցվեց թիվ 1 էներգաբլոկը, իսկ 1989 թ-ի մարտի 18-ին՝ թիվ 2 էներգաբլոկը: 1990-ականների սկզբի էներգետիկ ճգնաժամից հետո, երբ Հայաստանը հայտնվեց շրջափակման մեջ և չէր կարող

ապահովել ածխածնային արտադրանքի սեփական էներգետիկ կարիքները, որոշում կայացվեց վերագործարկել ՀԱԷԿ-ը:

1993 թ-ին ՀՀ կառավարությունը որոշեց վերագործարկել ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկը: Անվտանգության մակարդակի բարձրացման միջոցառումների և արդիականացման աշխատանքների ավարտին՝ 1995 թ-ի նոյեմբերի 5-ին, վերագործարկվեց ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկը և միացվեց երկրի էներգահամակարգին: Ներկայումս թիվ 2 էներգաբլոկն ապահովում է հանրապետությունում սպառվող էլեկտրաէներգիայի 35-38 %-ը: Թիվ 1 էներգաբլոկը կանգնեցման օրվանից չի միացվել էներգահամակարգին:

ՀԱԷԿ-ի համար վառելիք մատակարարում է «TVEL» ԲԲԸ-ն, որը մտնում է Ռուսաստանի պետական «Ռոսատոմ» կորպորացիայի մեջ:

Հայկական ԱԷԿ-ի անվտանգ շահագործման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ պահեստավորման համար կառավարումն ու պատասխանատվությունն ամբողջությամբ կրում է ՀՀ կառավարությունը, որին պատկանում է ՀԱԷԿ-ի բաժնետոմսերի 100 տոկոսանոց փաթեթը: Պատասխանատվություն կրում է նաև ձեռնարկությունը:

Կարելի է պնդել, որ ԽՍՀՄ-ի փլուզումն ամբողջությամբ ազդեց էներգետիկ քաղաքականության, մասնավորապես ՀԱԷԿ-ի վրա: Փաստացի ՀԱԷԿ-ը եղել է և շարունակում է մնալ միակ ատոմակայանը կովկասյան տարածաշրջանում՝ չհաշված Իրանի Իսլամական Հանրապետությունը, որն ունի սեփական ատոմակայանը Բուշերում:

Հայաստանին սահմանակից մյուս երկրները՝ Վրաստանը, Ադրբեջանը, Թուրքիան, չունեն ատոմակայաններ: Ատոմակայան կառուցելու մտադրություն հայտնել է Թուրքիան, նրան աջակցել է Ռուսաստանը և համաձայնել ներդրումներ անել շինարարության մեջ, սակայն տեղի բնակչության բողոքի ցույցերը, անկայուն քաղաքական իրավիճակը ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանի հետ հարաբերություններում հանգեցրեց Թուրքիայի միջուկային էներգետիկայի ոլորտում ռուսական ներդրումների զսպմանը: Թուրքիան նաև բանակցություններ է վարում Հարավային Կորեայի հետ Սև ծովի ափին՝ Տրայիգոնից ոչ հեռու, երկու նոր ատոմակայան կառուցելու համար:

ՀԱԷԿ-ի գործոնը օգտագործվում է բոլոր շահագրգիռ կողմերի հետ քաղաքական քննարկումներում, հատկապես կայունության և անվտանգության հարցերում: Հանրության հետ երկխոսություններում ՀԱԷԿ-ի օգտին առավել հաճախ

օգտագործվող փաստարկը 1992-1995 թթ-ի էներգետիկ ճգնաժամն է: Այդ շրջանում, երբ ՀԱԷԿ-ը կանգնեցվել էր, Հայաստանը հայտնվեց շրջափակման մեջ, ինչի հետևանքով ջերմային էլեկտրակայանները մնացին առանց բավարար քանակության վառելիքի: Էներգետիկ ճգնաժամը հանգեցրեց անտառների և կանաչ տարածքների զանգվածային հատումների: Առանձին անտառտնտեսություններում անտառածածկ տարածքների 10-ից 40 %-ը հատվեց: Այս փաստարկները ներկայում էլ օգտագործվում են ՀԱԷԿ-ի կողմնակիցների կողմից:

ՀԱԷԿ-ի հետ կապված բոլոր հարցերը. Անկասկած. պետք է լուծվեն ՀԱԷԿ-ի անվտանգության օբյեկտիվ գնահատականների հիման վրա, որոշումների կայացման գործընթացներում շահագրգիռ հանրության և տեղի բնակչության մասնակցության ամենաբարձր մակարդակով: Որոշումները պետք է կայացվեն՝ ելնելով քաղաքացիական հասարակության, բնակչության և երկրի շահերից՝ հաշվի առնելով պետական կառույցների և պաշտոնյաների անձնական պատասխանատվությունը:

ՀԱԷԿ-ի անվտանգության համար պատասխանատվության աստիճանը

Միջազգային մակարդակով ՀԱԷԿ-ի անվտանգության վերահսկողությունը իրականացնում է Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալությունը (ՄԱԳՍԵ): ՀՀ նախագահին առընթեր գործում է Ատոմային էներգետիկայի անվտանգության խորհուրդ, որում ներգրավված են ազգային և միջազգային փորձագետներ: 1993 թ-ից սկսած՝ Հայաստանը միջազգային կոնվենցիաներով ստանձնել է պարտավորություններ՝ կապված ճառագայթային անվտանգության հետ: Նաև ընդունվել են ճառագայթային անվտանգությունը կարգավորող օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր (տես <http://www.anra.am/index.aspx>, «Օրենսդրություն» բաժինը):

Հայկական ԱԷԿ-ի ճառագայթային անվտանգության վերահսկողության գործառույթներն իրականացնում է ՀՀ կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն (State regulatory authority for nuclear and radiation safety in atomic energy utilization field (ANRA) within the Government of the RA): Սահմանված կարգով Կոմիտեն պատրաստում է զեկույցներ միջազգային կազմակերպությունների, նախևառաջ, ՄԱԳՍԵ-ի համար: Դրանց հետ կարելի է ծանոթանալ <http://www.anra.am/index.aspx> կայքում:

Բացի այդ, ՀՀ կառավարությունը և ՀԱԷԿ-ը համագործակցում են մասնագիտացված հաստատությունների և ձեռնարկությունների հետ՝ կապված անվտանգության

բարձրացման, ախտորոշման, սեյսմակայունության գնահատման, ռադիոակտիվ թափոնների պահեստավորման և թաղման հարցերի հետ: ՀԱԷԿ-ն ատոմակայաններ շահագործող կազմակերպությունների Համաշխարհային ասոցիացիայի անդամ է, որի հիմնական նպատակն է հետևել ատոմակայանների անվտանգությանը: ՀԱԷԿ-ի անվտանգության հետ անմիջականորեն կապված է նաև Միջուկային ռեակտորների նախագծման գլխավոր նախագծող ձեռնարկությունը (Ռուսաստանի Դաշնություն):

1995 թվականից դոնոր-երկրների աջակցությունը՝ ուղղված Հայկական ԱԷԿ-ի անվտանգության մակարդակի բարձրացմանը, ընդհանուր առմամբ կազմել է մոտ 160 միլիոն դոլլար: Այդ գումարից 65 միլիոնը տրամադրել է ԱՄՆ-ն, 55 միլիոնը՝ ԵՄ-ն, 8 միլիոնը՝ ՌԴ-ն, 7 միլիոնը՝ ՄԱԳԱՏԷ-ն, և 25 միլիոնը՝ այլ պետությունները: Բացի այդ, ՌԴ-ն տրամադրել է 270 միլիոն դոլլարի արտահանման վարկ և 30 միլիոն դոլլարի դրամաշնորհ ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման համար: Եվ դրամաշնորհը, և վարկը տրամադրվել են ՌԴ-ից գույք ձեռք բերելու պայմանով («Տեղեկացված քաղաքացիների միություն» ՀԿ, <http://uicarmenia.org/ru/3516>):



ՀԱԷԿ-ի ռիսկերը

Պաշտոնական կառույցները և շահագրգիռ հասարակությունը տարակարծիք են ՀԱԷԿ-ի ռիսկերի գնահատականների հարցում: Ռիսկերի վերագնահատումը, որպես

կանոն, տեղի է ունենում ՀԱԷԿ-ի անվտանգությանն առնչվող առավել կարևոր իրադարձություններից հետո. 1986 թ-ի Չեռնոբիլի ատոմակայանի վթարից հետո, 1988 թ-ի Սպիտակի երկրաշարժից հետո, 1995 թ-ին ՀԱԷԿ-ի վերականգնման և վերագործարկումից հետո, 2011 թ-ի Ճապոնիայի «Ֆուկուսիմա» ատոմակայանի վթարից հետո, 2009 թ-ին «ՀԱԷԿ-ի նոր միջուկային բլոկի կառուցման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, ՀԱԷԿ-ի գործող 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետը մինչև 2026 թվականը երկարաձգելու մասին ՀՀ կառավարության որոշումից հետո:

Ըստ փորձագետների՝ ՀԱԷԿ-ի հիմնական ռիսկերը կապված են՝

- միջուկային ռեակտորի նախագծման և տեխնոլոգիայի սեփական ռիսկերի հետ
- սեյսմիկ ռիսկերի հետ
- ռեակտորի հովացման և ՀԱԷԿ-ի այլ կարիքների համար ջրի անբավարարության ռիսկերի հետ
- աշխատած միջուկային վառելիքի պահեստավորման ավազանից արտահոսքերի ռիսկերի հետ
- ՀԱԷԿ-ի շրջանում խիտ բնակեցվածության ռիսկերի հետ
- ՀԱԷԿ-ի տարածքից դուրս ջրի, հողի, մթնոլորտային օդի, գյուղատնտեսական մթերքների ռադիացիոն ֆոնի համակարգային մոնիթորինգի բացակայությամբ;
- հնացած սարքավորումներով
- որակյալ կադրերի արտահոսքի հետ
- միջուկային վառելիքի մատակարարման կախվածությամբ
- ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման հետ կապված նոր ռիսկերով և ռադիոակտիվ թափոնների թաղման համար նոր վայրերի որոնման հետ

[\(http://ecolur.org/hy/news/nuclear-energy/how-armenian-npp-to-be-taken-out-of-service/3988/\)](http://ecolur.org/hy/news/nuclear-energy/how-armenian-npp-to-be-taken-out-of-service/3988/):

Միջուկային ռեակտորի նախագծման և տեխնոլոգիայի սեփական ռիսկերը. այս ռիսկերը գնահատված են նախագծային փաստաթղթերում, համապատասխանում են ՄԱԳԱՏԷ-ի չափանիշներին: Ռիսկերը գնահատում և երաշխավորում է ՀՀ կառավարությանն առըթեր միջուկային անվտանգության պետական կոմիտեն:

Հասարակությունը չի մասնակցում ռիսկերի գնահատման գործընթացին և ստիպված է բավարարվել սահմանափակ տեղեկություններով, որոնք չեն պարունակում ոչ գնահատման մեթոդաբանություն, ոչ իրականացված ստուգումների նկարագրություն:

Սեյսմիկ ռիսկերը. Հայաստանի տարածքը ենթակա է բարձր սեյսմիկ ռիսկերի: Վերջին կործանիչ երկրաշարժը՝ 10 բալ հզորությամբ, տեղի ունեցավ Սպիտակում՝ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ին: ՀԱԷԿ-ի վրա զգացվեցին մինչև 6 բալ հզորությամբ ցնցումներ, որից հետո ԽՍՀՄ կառավարության որոշմամբ ՀԱԷԿ-ը կանգնեցվեց: «Հայաստանի կանաչների միության» նախագահ Հակոբ Սանասարյանը պնդում է, որ ՀԱԷԿ-ի հիմքի տակ կան տեկտոնական խզվածքներ: Դրանցից մեկը գտնվում է միջուկային ռեակտորից 34 կմ հեռավորության վրա, մյուսը՝ 16 կմ, իսկ երրորդը՝ 500 մետր հեռավորության վրա: Ըստ նրա եզրակացության՝ սեյսմիկ ռիսկերը ՀԱԷԿ-ի համար շատ բարձր են (<https://rus.azatutyun.am/amp/2340433.html>):

«Հայաստանի կանաչների միության» հետ համաձայն չէ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Երկրաբանության ինստիտուտի բաժնի վարիչ, երկրաբանական գիտությունների դոկտոր Արկադի Կարախանյանը: Նրա պնդմամբ՝ ՄԱԳԱՏԷ-ի մասնակցությամբ ինստիտուտի վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀԱԷԿ-ից 25-30 կմ հեռավորության վրա խզվածքներ չկան (http://finport.info/full_news.php?id=25211&lang=2):

ՀԱԷԿ-ի ղեկավարությունը, ՀՀ կառավարությանն առըթեր միջուկային անվտանգության պետական կոմիտեն նշում են, որ 1988 թ-ի Սպիտակի երկրաշարժի ժամանակ ՀԱԷԿ-ն արդեն անցել է փորձություն, երբ չի արձանագրվել որևէ կործանում կամ ռեժիմի խախտում, և որ այսօր ՀԱԷԿ-ը մի օբյեկտ է, որն ի վիճակի է դիմակայել 9 բալ հզորությամբ երկրաշարժ (<http://defacto.am/142343.html>).

Մեյսմիկ ռիսկերի գնահատումը կատարվում է և պետք է կատարվի մասնագետների կողմից: Ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությունը, ուսումնասիրությունների արդյունքները, եզրակացությունները, ինչպես նաև ուսումնասիրություններին մասնակից մասնագետների ցուցակը պետք է հասանելի լինեն շահագրգիռ հասարակությանը գնահատման համար՝ պատասխանատվության մակարդակի բարձրացման նպատակով:

Ջրային ռիսկերը և կոնֆլիկտները

Ջրային ռիսկերը ՀԱԷԿ-ի անվտանգության գլխավոր սպառնալիքներից են: Դիտարկվում են այդ ռիսկերի մի քանի գործոններ: Հիդրոերկրաբանության ոլորտի փորձագետ, երկրաբանական-հանքաբանական գիտությունների թեկնածու Ռուբեն Յաղոյանը կարծում է, որ ՀԱԷԿ-ի հիմնական ջրային ռիսկերը կապված են Արարատյան հարթավայրի հետ, որտեղ արտադրվում է երկրի գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը: Արարատյան հարթավայրի ստորերկրյա ջրերն անցնում են ՀԱԷԿ-ի տարածքով և ճեղքերով լցվում են Արարատյան հարթավայր: Դա բարձր որակի խմելու ջուր է: Ձնհալի արդյունքում դրանց մակարդակը բարձրանում է, հետո՝ նվազում: Երբ մակարդակը բարձր է, մեծանում են ռադիոակտիվ աղտոտման ռիսկերը: Արարատյան հարթավայրի համար սպառնալիք է նաև ՀԱԷԿ-ի հովացման ավազանը. հնարավոր վթարի դեպքում ավազանի ջուրը նույնպես կլցվի Արարատյան հարթավայր (<http://ecolur.org/hy/news/nuclear-energy/---/2366/>):

Հաջորդ խնդիրը կապված է ՀԱԷԿ-ի համար ջրի դեֆիցիտի հետ Արարատյան հարթավայրի ստորգետնյա ջրային աղբյուրների գերշահագործման հետևանքով,

որոնք մասնակիորեն սնուցում են Սևջուր գետը՝ ՀԱԷԿ-ի համար ջրի հիմնական մատակարարին: 1983 թվականին Սևջուր գետի և Ակնալճի ջրի հոսքը գնահատվում էր 17.8 խմ/վրկ: Այժմ այն կազմում է ընդամենը 3 խմ/վրկ («Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի հիդրոերկրաբան Աշոտ Սարգսյան, ԱՄՆ ՄԶԳ «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի շնորհանդես, 2014 թ., մարտ, Երևան): Գործող էներգաբլոկի միջուկային ռեակտորի սառեցման համար պահանջվում է 1 խմ/վրկ ջուր: Մինչդեռ գետը կարող է ապահովել ընդամենը 0.5 խմ/վրկ: Նոր էներգաբլոկի կառուցման դեպքում կպահանջվի երկու անգամ ավելի շատ ջուր: Արդյունքում, ՀԱԷԿ-ի ջրի կարիքները բավարարելու նպատակով 2013 թվականին հորատվեց 3 հորատանցք: Եվս 10 նոր հորատանցք հորատվել են կամ կհորատվեն 2017 թվականին (<http://ecolur.org/hy/news/water/overexploitation-of-groundwater-resources-in-ararat-valley-continuing/8672/>):

Այսինքն, ՀԱԷԿ-ի ջրամատակարարման խնդիրը մնում է մտահոգիչ, և մինչ օրս համարժեք առաջարկություններ չեն ներկայացվել:

ՀԱԷԿ-ի կայուն կառավարման ռիսկերը, որակյալ կաղրերի արտահոսքը

Միջուկային էներգետիկայի բնագավառում կայուն կառավարումը հիմնված է հետևյալ օրենսդրական հիմունքների վրա.

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 1999 թվականի փետրվարի 1-ին ընդունված «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքը <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=657>
2. 25.05.2015 թվականին ընդունված «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունում աշխատած միջուկային վառելիքի պահեստարան կառուցելու մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսված է կառուցել գերեզմանոց չոր

եղանակով աշխատած միջուկային վառելիքի պահեստավորման համար 50 տարի ժամկետով <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2331&lang=arm>

3. 13.10.1998 թվականին ընդունված «Հայկական ԱԷԿ» փակ բաժնետիրական ընկերությանը հարկային արտոնություն տալու մասին» ՀՀ օրենքը, ըստ որի՝ «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարը նվազեցնել 1997 թվականի հուլիսի 1-ից հետո ՌԴ-ի պետական վարկի հաշվին ՌԴ-ում ձեռք բերված արտադրական նպատակներով օգտագործելու համար նախատեսված ապրանքատեսակների գծով հաշվարկային փաստաթղթերում առանձնացված և վճարված ավելացված արժեքի հարկի գումարների

չափով

<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2051&lang=arm>:

ՀԱԷԿ-ի կայուն կառավարման ռիսկերն արդեն ունեն նախադեպեր բացասական հետևանքներով: Ռուսաստանից միջուկային վառելիքի համար մոտ 40 միլիոն դոլլարի պարտք վերցնելով՝ 2013 թ-ին Հայաստանը ստիպված փոխանցեց Սևան-Հրազդան էներգետիկ հիդրոկասկադը ռուսական պետական «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ» ընկերությանը 25 միլիոն դոլլարով: Փորձագետների գնահատմամբ՝ հիդրոկասկադի իրական արժեքը 20 անգամ ավելի բարձր է գնահատված արժեքից: Հայաստանի համար սա չափազանց անշահավետ գործարք էր, քանի որ էներգետիկ կասկադի դիմաց ցածր արժեքը թույլ չտվեց ամբողջովին վճարել միջուկային վառելիքի դիմաց ունեցած պարտքը: Ի լրումն, Ռուսաստանին փոխանցվեց Հայկական ԱԷԿ-ի ֆինանսական կառավարումը, որը նա օգտագործեց բացառապես իր ծախսերը ծածկելու համար: Ֆինանսական կառավարման պայմանագիրը Ռուսաստանի կողմից վաղաժամ դադարեցվեց միակողմանիորեն, հայկական կողմն այդ մասին տեղեկացավ

ռուսական

հրատարակություններից:

(<http://ecolur.org/hy/news/sevan/russian-inter-rao-ues-directly-interested-in-additional-water-outlets-from-lake-sevan/9370/>, <https://news.am/arm/news/95179.html>):

Անկայուն կառավարումը հանգեցրեց ֆինանսական անկայունության և կոնֆլիկտային իրավիճակների ՀԱԷԿ-ում: 2011 թ-ին ինժեներական կազմի 158 աշխատակից աշխատավարձի հետ կապված խնդիրների պատճառով աշխատանքից ազատվելու դիմում ներկայացրեց: ՀՀ էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը հրամայեց ստորագրել դիմումները: Այդպիսով, վտանգի տակ դրվեց մարդկային գործոնը, որը բոլոր ատոմակայաններում համարվում է անվտանգության գլխավոր երաշխիքներից մեկը: Աշխատակիցները շարունակեցին կատարել իրենց պարտականությունները, ինչպես իրենք հայտարարեցին, «ՀԱԷԿ-ի անվտանգության համար»: Կոնֆլիկտը կարգավորվեց «Ռոսատոմ»-ի ղեկավար Սերգեյ Կիրիենկոյի այցից և նախարարի հետ նրա բանակցություններից հետո: Նման կոնֆլիկտներն առաջացան ՀԱԷԿ-ի անվտանգության համար թերի գնահատումների և անբավարար պատասխանատվության, ռիսկերի անտեսման պատճառով, որոնք կարող էին հանգեցնել աղետի:

Վթարային իրավիճակների ռիսկերը

ՀԱԷԿ-ում 1996 թ-ից գործում է ճառագայթային մոնիտորինգի ավտոմատ համակարգ: Նախկինում գործել է նաև ռադիացիոն և էպիդեմիոլոգիական հսկողության լաբորատորիա, որը տեղակայված էր Մեծամորում՝ հատուկ հակահամաճարակային կայանում: Կայանը փակվեց ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Ներկայում ճառագայթային անվտանգության պատասխանատվությունը դրված է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության վրա:

Միջազգային փորձագետները ՀԱԷԿ-ի ռիսկերի հարցում տարակարծիք են: Միջուկային տեխնոլոգիաների գծով մասնագետ Ռոբերտ Քալանթարին (Framingham, Massachusetts, firm, Engineering Planning and Management USA) կարծում է, որ ՀԱԷԿ-ը նման է ցանկացած այլ միջուկային օբյեկտի: Ըստ նրա՝ ՀԱԷԿ-ը կարող է անվտանգ աշխատել այսպես կոչված «նախագծային դիզայնի վթարների» դեպքում, և անգամ

դիզայնի շրջանակներից դուրս վթարների դեպքում: Նրա հետ համաձայն չէ Անտոնյա Վենիշը՝ Վիեննայում ավատրիական կիրառական էկոլոգիայի ինստիտուտից: Նա Մեծամորը համարում է դեռևս շահագործման մեջ գտնվող «ամենավտանգավոր ատոմակայաններից մեկը»: Նա հղում է անում Հայաստանի միջուկային անվտանգության վերաբերյալ վերաբերյալ իր վերջին զեկույցին՝ պատրաստած միջազգային կոնվենցիայի շրջանակներում, որում «վնասների հաճախականության» միջին ռիսկը ՀԱԷԿ-ում գնահատվում է՝ 2 դեպք յուրաքանչյուր 10.000 տարվա ընթացքում: Այս նույն ցուցանիշը ԱՄՆ-ի ատոմակայաններում կազմում է՝ 2 դեպք յուրաքանչյուր 50.000 տարվա ընթացքում ([Http://news.nationalgeographic.com/news/energy/2011/04/110412-most-dangerous-nuclear-plant-armenia/](http://news.nationalgeographic.com/news/energy/2011/04/110412-most-dangerous-nuclear-plant-armenia/)):

Ճապոնական «Ֆուկուսիմա» ատոմակայանի աղետից հետո հայկական ԱԷԿ-ում անցկացվեցին սթրես-թեստեր «հետֆուկուսիմյան» չափանիշներով՝ ՄԱԳԱՏԷ-ի փորձագետների մասնակցությամբ: Եզրակացությունը դրական էր, ՀԱԷԿ-ի ռիսկերը վերահսկելի են և գտնվում են ընդունելի մակարդակի վրա:

Հանրությանը հայտնի է ՀԱԷԿ-ում վթարային իրավիճակների երկու դեպքի մասին, որոնք չեն հանգեցրել ռադիոակտիվ արտանետումների և կառավարելի են եղել:

1-ին դեպքը: 1982 թ-ի հոկտեմբեր 15-ին ՀԱԷԿ-ում տեղի ունեցավ վթար, որն առաջացրեց հրդեհ: 20 մետրից ավելի երկարությամբ մայրուղու վրա հրդեհի ազդեցության տակ մալուխները շարքից դուրս եկան, մասամբ վնասվել էին սարքավորումները: Առաջացան լուրջ խնդիրներ թիվ 1 բլոկի ռեակտորի հովացման ռեժիմի պահպանման և վերահսկման հետ, ինչպես նաև բարդություններ թիվ 2 բլոկի ռեակտորի նորմալ հովացման համար: Այդ նույնը օրը՝ երեկոյան, սկսվեց իրականացվել 1-ին կոնտուրի համեմատաբար հսկվող հովացում: Նույն օրը՝ հոկտեմբերի 15-ին, ժամը 20:40-ին, վերականգնվեց նեյտրոնային հոսքի

վերահսկումը, իսկ հոկտեմբերի 17-ին՝ ժամը 11:00-ին, գործի դրվեց աղբյուրի տիրույթում 6 կանալ: Ջերմահաղորդիչ էլեմենտներն ակտիվ գոտում չէին վնասվել: Հրդեհի մարումից հետո հովացման ընթացքում շարժական սարքերի օգնությամբ իրականացվեց ճառագայթային իրավիճակի ստուգում: Արձանագրվեց, որ խիստ ռեժիմի գոտու և ԱԷԿ-ի տարածքում գամմա ֆոնը գրեթե չի փոխվել՝ համեմատած մինչվթարային

մակարդակի

հետ

(http://rb.mchs.gov.ru/mchs/radiation_accidents/m_other_accidents/1982_god/Avarija_na_bloke_1_Armjanskoj_AJES_SSSR):

2-րդ դեպքը: 2017 թ-ի հունվար 21-ին հայտնի դարձավ ՀԱԷԿ-ի 110-կիլովոլտանոց ենթակայանի վթարային անջատման մասին: 110-կիլովոլտանոց գծի վրա կային սառցակալած հատվածներ: Երբ եղանակը տաքացավ և ձյունը սկսեց հալվել, տեղի ունեցավ կարճ միացում, որի արդյունքում ատոմակայանի հզորությունը հավասարվեց զրոյի: Երբ վերացվեցին բարձրավոլտ գծի խափանումները, շահագործման ռեգլամենտի համաձայն, սկսվեց ատոմակայանի հզորության բարձրացում: Միջուկային և ճառագայթային նորմերից շեղումներ չեղան: Ինչպես ԷկոԼուրին հայտնեց ՀՀ կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահ Աշոտ Մարտիրոսյանը, ատոմակայանի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրում ներառված են 110, 220-կիլովոլտանոց ենթակայանների արդիականացման միջոցառումները:

Բնակեցվածության խտության ռիսկերը ՀԱԷԿ-ի ազդեցության գոտում

ՀԱԷԿ-ի ազդեցության գոտին սահմանված է ՀԱԷԿ-ի միջուկային կամ ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանով (հաստատված է ՀՀ կառավարության կողմից 2005 թ-ի դեկտեմբերի 22-ին ընդունված «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու

մասին» N 2328-Ն որոշմամբ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=22060>): Պլանի համաձայն՝ անվտանգության ապահովմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ նախատեսված են ՀԱԷԿ-ից 5 կմ շառավղով: Իսկ հրատապ միջոցառումների պլանավորման գոտին նախատեսված է ՀԱԷԿ-ից 5-10 կմ շառավղով: Նշված չափանիշներով ազդեցության գոտում հայտնվում են 25 համայնք՝ Արմավիրի մարզում՝ Արմավիր, Մեծամոր քաղաքները, Արշալույս, Ակնալիճ, Առատաշեն, Աղավնատուն, Արագած, Արտաշար, Արևիկ, Եղեգնուտ, Զարթոնք, Խորոնք, Ծաղկալանջ, Ծիածան, Հովտամեջ, Հայթադ, Մայիսյան, Մրգաշատ, Նորավան, Գեղակերտ, Տարոնիկ, Ֆերիկ գյուղերը, Արագածոտնի մարզում՝ Արագածոտն, Նոր Ամանոս, Նոր Եղեսիա գյուղերը: Բայց ՀԱԷԿ-ին վերաբերող կառավարության որոշումներում ազդակիր համայնքները նշված չեն: Իսկ դա նշանակում է, որ նրանց կարգավիճակը սահմանված չէ, և վիճարկել որևիցե որոշում, օրինակ, դատական կարգով, տեղի բնակչությունը չի կարող: Անորոշությունը երևում է այն ժամանակ, երբ ամերիկյան այնպիսի կազմակերպություններ, ինչպիսին է, օրինակ, Խաղաղության կորպուսը, չեն թույլատրում իրենց աշխատակիցներին բնակվել Արմավիրի կամ Մեծամորի տարածքում:

Ներկայումս տեղի հասարակական կազմակերպությունները և բնակչությունը բարձրացնում են ՀԱԷԿ-ից 10 կմ շառավղով գտնվող համայնքների պաշտոնապես ազդակիր ճանաչելու հարցը:

ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման ռիսկերը և որոշումների քաղաքական մակարդակը

2000-ականների սկզբին Եվրամիությունը Հայաստանի կառավարության հետ բանակցություններ էր վարում ՀԱԷԿ-ի երկու էներգաբլոկները շահագործումից դուրս բերելու վերաբերյալ և խոստացել էր տրամադրել 200 միլիոն եվրո: Եվրամիության հետ բանակցությունների արդյունքում ՀՀ կառավարությունը 2006 թվականի

հոկտեմբերի 12-ին հաստատեց թիվ 1637-Ն որոշումը ՀԱԷԿ-ը շահագործումից դուրս բերելու վերաբերյալ: Այդ նպատակով բացվեց արտաբյուջետային հաշիվ: Նույն 2006 թվականի նոյեմբերի 29-ին կառավարության թիվ 48 արձանագրային որոշմամբ ընդունվեց ՀԱԷԿ-ը շահագործումից հանելու ռազմավարությունը: Այդ նպատակով բացվեց արտաբյուջետային հաշիվ: Ռազմավարությամբ նախատեսվում էր աշխատանքները սկսել 2016 թվականին, երբ ՀԱԷԿ-ը, ենթադրաբար, պետք է սպառեր իր տեխնիկական ռեսուրսները: **Սակայն դա չարվեց:**

Կառավարությունն անընդհատ ձգձգում էր գործող էներգաբլոկները շահագործումից դուրս բերելու վերաբերյալ հարցերի դիտարկումը: Եվ միայն 2017 թ-ին մշակվեց 1989 թ-ից անգործության ռեժիմում գտնվող ՀԱԷԿ-ի առաջին էներգաբլոկը շահագործումից դուրս բերելու մասին օրենքի նախագիծը (<https://www.e-draft.am/projects/272/about>): Ինչ վերաբերում է գործող 2-րդ էներգաբլոկին, նրա շահագծման ժամկետը երկարաձգվեց մինչև 2026 թ-ը ՀՀ կառավարության 2014 թ-ի մարտի 27-ի արձանագրային որոշմամբ: Պատճառներից մեկն այն է, որ ՀԱԷԿ-ը, ապահովելով երկրում էլեկտրաէներգիայի ամբողջ արտադրանքի 35-38%-ը, էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման շուրջօրյա ծանրաբեռնվածության գրաֆիկում հանդիսանում է բազիսային: Մեկ այլ պատճառ է հանդիսանում ՌԴ պետական «Ռոսատոմ» կորպորացիայի միջամտությունը, որը ներկայում վերահսկում է ՀԱԷԿ-ի գործող 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքները: Ահա կառավարության որոշումների այն շարքը, որն ապահովում է Հայաստանի և Ռուսաստանի միջև ձեռք բերված պայմանավորվածությունները.

1. 2014 թ-ի դեկտեմբերին Ռուսաստանի Դաշնության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև ստորագրվեց համաձայնագիր Հայկական ատոմային էլեկտրակայանի թիվ 2 էներգաբլոկի

շահագործման ժամկետի երկարաձգման բնագավառում համագործակցության վերաբերյալ:

2. 2015 թ-ի փետրվարին ստորագրվեց համաձայնագիր ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգմանն ուղղված աշխատանքների ֆինանսավորման համար ՀՀ կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին: 2015 թ-ի հունիսին «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի միջև ստորագրվեց պայմանագիր՝ ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների, մատակարարումների և ծառայությունների իրականացման վերաբերյալ: Ֆինանսական հատկացումները կատարվում են ՌԴ-ի կողմից վարկային միջոցներով (<http://armeniannpp.am/hy/about-us/history.html>):

ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման հարցն ուղղակիորեն կապված է ՀԱԷԿ-ի նոր էներգաբլոկի կառուցման հետ: «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 27.10.2009 թ-ին (<http://parliament.am/legislation.php?sel=show&ID=3708&lang=arm>): Օրենքը մնաց թղթի վրա սեփական ֆինանսական ռեսուրսների բացակայության և ոչ բավարար ներդրումների պատճառով: Բացի այդ, ավելի ուշ պարզվեց, որ սահմանված 1060 ՄՎտ հզորությունը անհամատեղելի է Հայաստանի էներգահամակարգի հետ, որտեղ ձևափոխման առավելագույն ծանրաբեռնվածությունը կազմում է 1240 ՄՎտ՝ հաշվի առնելով էլեկտրաէներգիայի բոլոր աղբյուրները՝ ջերմակայանները, հիդրոէլեկտրակայանները: Ներկայումս օրենքում մտցվել են փոփոխություններ, որոնց համաձայն, սահմանված հզորությունը կրկնակի կրճատվել է: Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թթ-ի ծրագրում նոր ՀԱԷԿ-ի կառուցման մասին ոչինչ ասված չէ (<http://www.gov.am/files/docs/2207.pdf>):

Այսպիսով, նոր էներգաբլոկի կառուցման հարցն արագ փոխարինվեց ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի ժամկետի երկարաձգման մասին որոշմամբ:

ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման ռիսկերն ու անվտանգության խնդիրները չեն քննարկվել շահագրգիռ հասարակության, տեղի բնակչության հետ, չի անցկացվել շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցության գնահատման փորձաքննություն:

Էլեկտրաէներգետիկական համակարգի ռիսկերը ՀԱԷԿ-ի համար

ՀԱԷԿ-ի համար Էլեկտրաէներգետիկական համակարգի ռիսկերին ուշադրություն դարձրեց «Էնտել» ընկերության տնօրեն, նախկինում «Հայէներգո» պետական ձեռնարկության գլխավոր ինժեներ Սպարտակ Հակոբյանը: Նրա կարծիքով՝ եթե չապահովվի ՀԱԷԿ-ի համաժամանակյա և էլեկտրաէներգետիկական համակարգի կայուն աշխատանքը, կարող է առաջանալ շատ վտանգավոր ասինքրոն ռեժիմ: Սա սպառնալիք կստեղծի ոչ միայն ողջ էներգետիկ համակարգի, այլ նաև նրա կառուցվածքի մեջ գործող Հայկական ԱԷԿ-ի համար http://www.finport.am/full_news.php?id=29833&lang=2:

Հավելենք, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (ՀԷՑ) էներգահամակարգի արդիականացման արդի խնդիրը չի կարողանում լուծել ֆինանսական մի շարք խնդիրների պատճառով: 2015 թ-ին ՀԷՑ-ն ուներ պարտքեր մի շարք ընկերությունների նկատմամբ մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց, այդ թվում նաև ՀԱԷԿ-ի: Հասարակությունը կարծում է, որ ֆինանսական խնդիրներն առաջացել են բարձր կոռուպցիոն ռիսկերի հետևանքով, և որ կառավարությունը կուտակված պարտքների պատասխանատվությունը դրեց հարկատուների ուսերին: Ներկայում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի բաժնետեմսերի 100% փաթեթը պատկանում է հայկական ծագմամբ ռուս օլիգարխ Սամվել Կարապետյանին պատկանող «Տաշիր» ընկերությունների խմբին: Նա բաժնետոմսեր ձեռք բերելու գործարք է կնքել 2016 թ-ին «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ»-ի նախկին տնօրենի հետ: Ներկայում Ասիական զարգացման ֆանկի տնօրենների խորհուրդը հաստատել

Է վարկային ծրագիր, որով նախատեսվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ին տրամադրել 80 միլիոն դոլլարի վարկ

<http://www.ena.am/news.aspx?kind=0&hid=357&lang=1>:

Կառավարության նոր որոշումները Հայաստանի ատոմային էներգետիկայի բնագավառում

2017 թ-ին ՀՀ կառավարությունը պատրաստել է մի քանի փաստաթղթեր ատոմային էներգետիկայի և ՀԱԷԿ-ի ոլորտում:

Հայաստանում ռադիոակտիվ հումքի որոնումները: Կառավարությունը կրկին մտադիր է զբաղվել ռադիոակտիվ հումքի որոնմամբ: Կառավարությունն ընդունեց «Ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար կայանալիք մրցույթի մասնակցության հայտերին, մրցույթի մասնակիցների որակավորմանը, ֆինանսական և տեխնիկական կարողություններին ներկայացվող չափորոշիչները, ինչպես նաև մրցութային փաթեթների պատրաստման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 1212 - Ն որոշումը, 2017 թվականի սեպտեմբերի 28 (<https://www.e-gov.am/gov-decrees/item/29307/>), «Լիազոր մարմնի և ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված անձի միջև կնքվող նախնական պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» 1190 – Ն որոշումը, 2017 թվականի սեպտեմբերի 28 (<https://www.e-gov.am/gov-decrees/item/29277/>), «Ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մրցութային հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին» 1199 – Ն որոշումը, 2017 թվականի սեպտեմբերի 28 (<https://www.e-gov.am/gov-decrees/item/29296/>):

Դեռ 2008 թվականին Հայաստանի կառավարությունը Ռուսաստանի հետ համատեղ ստեղծեց «Հայ-ռուսական լեռնահանքային կազմակերպություն» ՓԲԸ-ն՝ հատուկ ուրանային հանքավայրերի լրացուցիչ հետախուզման համար: Ընկերության գործունեությունը կանգնեցրեց Սյունիքի մարզի բնակիչների բողոքի ակիբը, որտեղ ընկերությունը սկսել էր իր աշխատանքները, իսկ կառավարությունը հայտարարեց, որ Հայաստանում հեռանկարային ուրանային հանքավայրեր չկան: Եվ այժմ կրկին այդ նույն ուրանի որոնումները՝ պարզապես այլ անվան տակ: Այսպիսով, Հայաստանի կառավարությունը ռադիոակտիվ հումքի պաշարների նկատմամբ ցուցաբերում է անհետևողականություն և խիստ հակասական դիրքորոշում:

Ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարությունը

2017 թ-ի հոկտոբերի 5-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում առաջացած ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարությանը հավանություն տալու մասին» թիվ 42-12 արձանագրային որոշումը (<https://www.e-gov.am/protocols/item/810/>): Նոր ռազմավարությունը պայմանավորված է նրանով, որ ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետը երկարաձգվել է մինչև 2026 թվականը, ինչի արդյունքում ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման հարցերը պահանջում են նոր լուծումներ:

Փաստաթղթի հիմնավորման համաձայն, նախկինում թափոնները տեղափոխվում էին Ռուսաստան պահեստավորման և հետագա վերամշակման համար: Մակայն 1991 թվականին՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, Հայաստանի տրանսպորտային շրջափակման պատճառով թափոնների տեղափոխումը տեխնիկապես դարձավ անհնար:

Մինչ ՀԱԷԿ-ի վերականգնումը և վերագործարկումը՝ 1995 թվականին, ձեռնարկության տարածքում կուտակվել էր 600 միավոր աշխատած միջուկային վառելիք: 2000 թվականին ֆրանսիական «Framatom» ընկերությունը կառուցեց գերեզմանոց չոր թափոնների երկարաժամկետ պահեստավորման համար, որտեղ մինչ 2005 թվականը տեղափոխվել է 616 միավոր աշխատած միջուկային վառելիք: Յուրաքանչյուր տարի գործարանը գեներացնում է 80 միավոր աշխատած միջուկային վառելիք:

2008 թվականին շահագործման դրվեց 2-րդ գծի 1-ին մասը 672 միավոր աշխատած միջուկային վառելիքի պահեստավորման համար, որը լցվել էր 2015 թվականին: Նույն թվականին հանձնվեց երկրորդ գծի 2-րդ մասը, որը նախատեսված էր նաև 672 միավոր միջուկային վառելիքի համար: Մինչ 2034 թվականը նախատեսվում է կառուցել 3-րդ գիծը 168 միավոր աշխատած միջուկային վառելիքի համար և, միաժամանակ, 4-րդ գիծը՝ 593 միավոր աշխատած միջուկային վառելիքի համար: Աշխատած միջուկային վառելիքի հետ կա մեկ այլ խնդիր ևս: 2009 թվականից ՀԱԷԿ-ն օգտագործում է թրթռումային (վիբրացիայի) ազդեցության նկատմամբ կայուն վառելիք, որը կարող է պահվել ավագանում մաքսիմում 10-12 տարի է:

Ռազմավարության հիմնական կետերից մեկն է ընտրել հարթակ ՀԱԷԿ-ի ռադիոակտիվ թափոնների նոր գերեզմանոցի կառուցման համար՝ նրա հետագայում ընդլայնման հնարավորությամբ: Այս նպատակով առաջարկվում է ուսումնասիրել ռադիոակտիվ թափոնների թաղման հնարավորությունները խորը երկրաբանական կազմավորումներում և անցկացնել համապատասխան երկրաբանական և հիդրոլոգիական ուսումնասիրություններ:

Հաշվի առնելով աշխատած միջուկային վառելիքի և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման կարևորությունն ու անհրաժեշտությունը, աշխատած միջուկային վառելիքի և ռադիոակտիվ թափոնների հնարավոր ռիսկերն ու

ազդեցությունները տեղի բնակչության, առողջության և շրջակա միջավայրի վրա, ՀԱԷԿ-ի ազդեցության գոտում խիտ բնակեցվածությունը՝ շահագրգիռ հասարակությունը և ՀԱԷԿ-ի ազդեցության գոտու բնակչության ներկայացուցիչներն առաջարկում են.

1. ապահովել շահագրգիռ հասարակության և ՀԱԷԿ-ից 10 կիլոմետր շառավիղով հեռավորության վրա գտնվող համայնքների բնակչության մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարության հանրային լսումներին՝ ապահովելու վստահության անհրաժեշտ մակարդակ և կառուցողական երկխոսություն

2. բոլոր այն համայնքները, որոնք գտնվում են ՀԱԷԿ-ից 10 կմ շառավիղով հեռավորության վրա, ճանաչել և հաստատել որպես ազդակիր համայնքներ

3. հատուկ կետով ներառել ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարության մեջ հանրային լսումների արդյունքները՝ կատարված միջոցառումների յուրաքանչյուր փուլում

4. ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի թաղման համար հարթակի որոնման գործընթացում որոշել չափորոշիչներ՝ ապահովելու երկրաբանական պաշտպանիչ կոմպոնենտ, ինչպես նաև անվտանգության չափորոշիչներ՝ հաշվի առնելով առկա ռիսկերը՝ երկրաշարժ, սողանք, ստորգետնյա և վերգետնյա ջրեր, դրենաժ և այլ գործոններ, որոնք ազդում են տվյալ երկրաբանամորֆոլոգիական միջավայրի վրա

5. ներկայացնել ջրով ապահովման համար պահանջարկի գնահատականը աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման համար, ՀԱԷԿ-ի աշխատանքի և աշխատած միջուկային վառելիքի կառավարման համար տալ ջրային

ռեսուրսների՝ Մեծամոր գետի, ջրային հորերի կայուն օգտագործման գնահատական, որոշել ջրի մատակարարման պոտենցիալ հնարավոր նոր աղբյուրներ

6. չափորոշիչների և գնահատականների հիման վրա մշակել և ընդունել ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի կառավարման համար անվտանգության պահանջների գնահատում և մեթոդաբանություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համար

7. Անցկացնել ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի կառավարման ռազմավարության նախատեսված միջոցառումների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննություն

8. անցկացնել հանրային լսումներ ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության խնդրի վերաբերյալ, որի գործողության ժամկետը կառավարության որոշմամբ երկարաձգվել է մինչև 2026թ., և ներկայացնել այն երկրների փորձը, որտեղ գործում են հին ռեակտորների ժամկետի երկարացման ծրագրեր

9. ապահովել քննարկվող թեմաների, պլանների, միջոցառումների թափանցիկությունը

10. ՀԱԷԿ-ում, ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի գերեզմանոցում, ՀԱԷԿ-ի և գերեզմանոցի հարակից 10 կմ շառավղով տարածքներում ռադիոակտիվ ֆոնի որոշման համար իրականացնել, օդի, հողի, ջրի, բույսերի ամենօրյա մշտադիտարկումներ և արդյունքները ամեն օր հրապարակել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքում:

11. ՀԱԷԿ-ի ազդակիր համայնքներում իրականացնել հնարավոր վթարներից պաշտպանվելու դասընթացներ, բնակիչներին բաժանել տեղեկատվական թերթիկներ, անհրաժեշտ պարագաներ, վթարներից պաշտպանվելու քայլերը

հրապարակել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայքերում՝ երևացող հատվածներում կամ հեշտ գտնվող ենթաբաժնում:

Եզրակացություն

Հայաստանի ատոմային էներգետիկայի բնագավառը համապարփակ լուծումների կարիք ունի՝ հիմնված բնակչության շահերի պաշտպանության, ազգային և տարածաշրջանային անվտանգության վրա: Հայաստանում ատոմային էներգետիկայի ոլորտի զարգացմանն ուղղված որոշումներում և ռազմավարություններում կառավարությունն առաջարկում է ռիսկերի միայն մասնակի գնահատումներ և մասնակի արդյունքներ: Սակայն յուրաքանչյուր նկարագրված խնդրի վերաբերյալ այլընտրանքային լուծումները բացակայում են: Չկա էներգետիկ անվտանգության երկարաժամկետ գնահատումը, հաշվի առնված չէ այն երկրների փորձը, որոնք հրաժարվել են ատոմակայանների օգտագործումից և չունեն ածխածնային վառելիքի պաշարներ: Չկան տնտեսական գնահատականներ ատոմային էներգետիկան այլընտրանքային էներգետիկայով փոխարինելու հնարավորությունների վերաբերյալ, օրինակ, արևային էներգիայով՝ հաշվի առնելով բոլոր գործոնները՝ ֆինանսական, մարդկային, տնտեսական և բնական ռեսուրսները: Ներկայացված չեն ՀԱԷԿ-ի էներգաբլոկները շահագործումից դուրս բերելու, կուտակված ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի ուտիլիզացման ժամանակակից տեխնոլոգիաները:

Անհրաժեշտ է ընդլայնել Եվրամիության մասնակցությունը ոչ միայն ՀԱԷԿ-ի անվտանգության մակարդակի բարձրացման, այլ նաև ՀԱԷԿ-ի շահագործման ընթացքում ռիսկերի գնահատման հարցում, ինչպես նաև ՀԱԷԿ-ի շահագործումից դուրս բերելու գործընթացում, որի համար անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը: Եվ միայն նման գնահատականներ և հնարավոր այլընտրանքներ ունենալուց

հետո անհրաժեշտ է մշակել Հայաստանի ատոմային էներգետիկ ոլորտի անվտանգության ընդհանուր Հայեցակարգը՝ այս ոլորտի զարգացման Ռազմավարության փոխարեն:

10.11.2017թ.

Այս հաշվետվությունը պատրաստվել է «Հանուն Հարավային Կովկասում էներգետիկ պարադիգմի փոփոխությունների» ծրագրի շրջանակներում, «Կանաչ ալլընտրանք» ՀԿ-ի (Վրաստան) ենթադրամաշնորհ, դոնոր՝ Brot für die Welt Protestant Development Service (Գերմանիա)